


Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացնք

**ՍՊԸ. ԱՊԱՀՈՎ. ԿԵՆՏՐ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Ծպահովագրութիւն սերիա № 9**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ-ՌԴԴԵՑՈՒՅՑ**

(Ում ի՞նչ է տալիս սոցիալական առա-
հովագրությունը յեզ նրանից ոգևծելու
կարգը)



Հրատ. Հայ. Սոցալկենտրովարչության
Յերկան 1925 թ.

1 MAR 2010

Պրուեապնեք բուռը յիշկընելիք, միացեք

3684
4-78

ՍՈՅ. ԱՊԱՀՈՎ. ԿԵՆՏՐ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Ծպահովագրության սերիա № 9

ՍՈՅԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ-ՌԻԴԵՑՈՒՅՑ

(Առմ ի՞նչ է տալիս սոցիալական ապահովագրությունը յեզ եռանից սգսվելու կարգը)

Հրատ. առ. Սոցապկենտրավարչության
Թիրեան 1925 թ.

02 AUG 2013

97/100

ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Զնայած բանվորների և ծառայողների
սոցիալական ապահովագրությունը, Հայաս-
տանում սկսված ե մի քանի տարի սրա-
նից առաջ, բայց ներկայումս նկատվում ե,
վոր մեր բանվորները և ծառայողները նը-
րա վոչ միայն գաղափարական, այլև
գործնական խնդիրների մասին շատ քիչ
բան գիտեն: Այս յերեսույթը ի հարկե բա-
ցատրվում է մի քանի պատճառներով և
գլխավորապես նրանով, վոր սոցիալական
ապահովագրության խնդիրների մասին մենք
շատ քիչ հայերեն գրականություն ենք ու-
նեցել մինչև որս: Սոցիալական ապահովա-
գրության գործնական մի շարք կարեոր
հարցերի պարզաբանման և նրանցից ոգ-
տվելու կարգի մասին, մեր բոլոր բանվոր-
ներին ու ծառայողներին իրազեկ անելու
նպատակով, Հայաստանի Սոցապկինտր-

Յրեստի 1-ին տպարան

Քրտակ. № 1832 պատ. № 2299, տիրամ 5000

վարչությունը կազմել և այս ուղեցույցը:
Վորպես առաջին փորձ, ի հարկե նա կու-
նենա վորոշ թերություններ, բայց ժամա-
նակի ընթացքում կվերացվեն նրանք նոր
հրատարակություններով:

Ամեն մի ապահովագրված պետք և
ունենա իր մոտ այս ուղեցույցը և սոցիա-
լական ապահովագրության հարցերում դե-
կավարվի նրանով:

ՀԱՅԱՍՏ. ՍՈՅ. ԱՊԱՀ. ԿԵՆՏՐ.
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈ- ՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱ- ՏՈՒ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՄ Ի՞՞Զ Ե ՏԱԼԻՌ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ-
ՆԻՑ ՈՒՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ԳԼՈՒԽ Լ-ԻՆ

1. Սոցիալական ապահովագրության գաղափարը նոր չէ, նա ծնունդ և առել դեռ 19-րդ դարում և համարյա թե Յեվրո-պական բոլոր պետություններում սկսած 19-րդ դարի կիսից բանվորական շարժումների ձնշման տակ զանազան որենքներ եյին հրատարակվել սոցիալական ապահո-վագրության այս կամ այն տեսակի կամ կեաի մասին։ Այսպիսի որենքներ եյին հրատարակվել նաև մեռաստանի միապե-

տական կառավարության որով։ Սակայն Ցեղոպական պետություններում և թե նախկին միապետական Ռուսաստանում սոցիալական ապահովագրության վերաբերյալ հրատարակված որենքները յերբեք ի նկատի չեն ունեցել բանվորների շահերը-բուն սոցիալական ապահովագրությունը այլ հրատարակել յեն բանվորներին «քըննացնելու» յեկ նրանց շարժումները մեղմացնելու կամ իսպառ վոչնչացնելու նպատակով։ Ցեկ իսկապես հրատարակված բոլոր որենքները գործնական կյանքում վերջիվերջո հանգում եյին նրան, վոր սոցիալական ապահովագրությունը տարածվում եր բանվորության հաղիվ $10^{\circ}/\circ$ -ի վերայեկ այն ել մեծամեծ ծախքեր պահանջելով ապահովագրված բանվորներից (նրա դրամական մասնակցությունը), իսկ բանվորության $90^{\circ}/\circ$ -ի համար այդ որենքները մեռում եյին անիրազործելի։

1917 թի Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո դրությունը փոխվում

է բոլորովին։ Խորհրդային բանվորագյաւղացիական կառավարությունը, չնայած գտնվում եր զեռ քաղաքացիական կոխվաբերի շրջանում և հարկադրված եր զեռնքը ձեռքին պահպանել բանվոր դասակարգիքաղաքական նվաճումները յեկ մյուս կողմից յերկիրը գտնվում եր քայլքայված ու տնտեսապես միայնգամայն հյուծված դըրության մեջ, անմիջապես ձեռնարկում երանվորների սոցիալական ապահովագրության հիմնական որենքների կատարման։

Խորհրդային լշխանության կողմից հրատարակվող սոցիալական ապահովագրուման որենքները մեկընդմիշտ վերջ յեն զընում այդ առթիվ յեղած բոլոր հին որենքները յեկ կյանքում կիուարվում յեն բոլորովին այլ սկզբունքով։

2. ԱՎԲԵՐ ՅԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆԻՄ

Զարմածայն Խորհրդային սոցիալական ապահովագրման որենքների, ապահովագրվում յեն, բոլոր վարձու աշխատանք կատարող բանվորներն ու ծառայողները, վո-

բոնք անկախ իրենց աշխատանքի անողությունից աշխատում յեն պետական, մասնավոր, կոռագերատիվ, հասարակական, բարեգործական, ստորյերկրպյա յեվ այլ տեսակի հիմնարկություններում ու ձեռնարկություններում:

3. ԻՆՉՊԵՄ Ե ԿԱՏԱՐՎՈՒԹՅ ԱԳԱՀՈՎԱԳԱԴՐՈՒՄԸ

Ամեն մի բանվոր կամ ծառայող, յերբ մտնում է ծառայության, պետք է պահանջի իրենց տեղկոմից, կամ գործարանային կոմիտեից ապահովագրական տոմս: Տեղական կոմիտեն (տեղկոմը) կամ գործարկոմը, (գործարանային կոմիտե) կազմում յեն նոր ծառայության ընդունվող բանվորների յեվ ծառայողների ցուցակը յեվ ներկայացնում յեն սոցապգանձարկղին: Վերջինիցը ստանալով սոցիալական ապահովագրական տոմսերը բաժանում յեն նոր ընդունվող ծառայողներին ու բանվորներին:

4. ՈՎԿ Ե ՎՃԱՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ $\frac{1}{0}$ $\frac{1}{0}$ -ՆԵՐԸ, ԸՍՏ ԽՈՐՀՅԱՅԻՆ ՈՐԵՆՔՆԵՐԻ:

Սոցիալական ապահովագրության մասին Խորհրդային իշխանության հրատարակած որենքների համաձայն, սոցապահովագրական $\frac{1}{0}$ $\frac{1}{0}$ -ՆԵՐԸ վճարում յեն հիմնարկություններն ու ձեռնարկություններն իրենց հաշվին և վոչ մի գեպքում չի պահում բանվորի կամ ծառայողի սոճիկից (հակառակ ըուրժվական որենքների):

5. ԱՄԵՆ ՄԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԻՆՉՓԱՆ ԴՐԱՄ Ե ՎՃԱՐՈՒՄ ԻՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ամեն մի հիմնարկություն կամ ձեռնարկություն, վորը ունի վարձու բանվորներ կամ ծառայողներ, նրանց ապահովագրելու համար վճարում է ամեն ամիս իր բոլոր բանվորներին ու ծառայողներին:

բաց թողած աշխատավարձի վորոշ $\frac{0}{0}$ -ը,
որինակ՝ 8, 10, 12, 14, 16, 18, 20, $22\frac{0}{0}$:

6. Ի՞նչ ՀիՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՔԱՆԻ $\frac{0}{0}$ Ե
ՎՃԱՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ-
ԹՅԱՆ

Ամեն մի հիմնարկության կամ ձեռ-
նարկության սոցիալական ապահովագրու-
թյան համար վճարված $\frac{0}{0}$ -ը վորոշվում է
նրանով թե տվյալ հիմնարկությունը, կամ
գործարանը վոր չափով և բանվորի համար
վճասակար կամ վտանգավոր աշխատանք
տանում: Որինակ՝ գրասենյակային աշխա-
տանք կատարող հիմնարկությունները վր-
ճարում են ամենից քիչ $\frac{0}{0}$ $80\frac{0}{0}$, իսկ գա-
ղերի հետ գործ ունեցող, հանքային կա-
ռուցող և այլ նման հիմնարկները վճարում
են ամենաբարձր $\frac{0}{0}$ $22\frac{0}{0}$ սոցապահովա-
գրության:

7. Ի՞նՉՊԵՄ ՅԵՆ ԳԱՆՉՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԱ-
ԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ $\frac{0}{0}$ -ՆԵՐԸ:

Սոցիալական ապահովագրության
 $\frac{0}{0}$ - $\frac{0}{0}$ -ները, հիմնարկությունը կամ ձեռ-
նարկությունը վճարում ե իր բանվորներին
ու ծառայողներին աշխատավարձ բաց թող-
նելու ժամանակ: Ցեթե որինակ՝ նա վճա-
րելու և ասենք մայիս ամսվա ապահովագ-
րական $\frac{0}{0}$ -ը, նրան ժամանակ և տրվում
վճարելու մինչև հունիս ամսի 7-ը յեկ այդ
ժամանակում հիմնարկությունը յեթե չի
վճարում ապահովագրական $\frac{0}{0}$ - $\frac{0}{0}$ -ները,
կամ ուշացնում ե, նրանց մասին ձեռք յեն
առնում միջոցներ:

8. Ի՞նչ ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՅՆ ՀԻՄՆԱՐԿՈՒ-
ԹՅԱՆ ԿԱՄ ԶԵՇՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ՎՈՐԸ
ՉԻ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՄ ՈՒՇԱՅՆՈՒՄ Ե ՍՈ-
ՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ $\frac{0}{0}$ - $\frac{0}{0}$ -
ՆԵՐԸ:

Սոցիալական ապահովագրության
 $\frac{0}{0}$ - $\frac{0}{0}$ -ները չվճարող հիմնարկություն
կամ ձեռնարկություն չի կարող լինել:

Յեթե պատահի այլպիսին, անմիջապես նրա գործը տրվում է դժուարան և որենքի ուժով բանագանձվում է նրանից պահանջվող գումարը: Իսկ սոցազանովագնության $\frac{0}{0}-\frac{0}{0}$ -ների վճարման ուշացումներ հաճախ յեն պատահում, բայց ուշացնող հիմնարկությունները վճարում յեն տուգանք (շտրափ) իրենց ուշացրած ժամանակի համար:

Այսպիս, վոր սրանից ամենից շատ տուժում են սոցազանձարկղի $\frac{0}{0}-\frac{0}{0}$ -ները ժամանակին չ'վճարող հիմնարկությունները յեվ ձեռնարկությունները, վորի համար և նրանք պետք ե աշխատեն ժամանակին վճարել սոցազգանձարկղի $\frac{0}{0}-\frac{0}{0}$ -ները յեվ չուշացնել: Ուրինակ՝ յեթե մի վորեիցե հիմնարկություն ուշացըել և մեկ ամիս կ'վճարի $10^0/_0$ տուգանք, իր վաճարելիք գումարի, իսկ յեթե 2-րդ ամիսը յեվս, վըճարում է տուգանք ևս $15^0/_0$ և ամեն մի ուշացըած ամսի համար վճարում է $15^0/_0$ տուգանք:

9. ԱՄԵՆ ՄԻ ԲԱՆՎԱՐ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՏՔ ԵԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿՈՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ $\frac{0}{0}-\frac{0}{0}$ -ՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՅԻ ՀԱՄԱՐ:

Ամեն մի բանվոր կամ ծառայող, ինչպես յեվ աեղում պետք է շատ լավ գիտակցի, վոր սոցիալական ապահովագրության համար մուծվող դրամը, մուծվում է իր համար: Աեն որ մեր սոցազգանձարկղից 100-ավոր բանվորներ ու ծառայողներ ըստանում են զանազան նպաստներ՝ աշխատավարձ ժամանակավոր հիվանդության համար, գործադուրկները յեվ հաշմանդամները ստանում յեն թոշակ, մայրերը ստանում յեն նործին յերեխային կերպակելու դրամ և այն, վորի համար հարկավոր և դրամ: Յեթե սոցազանձարկության $\frac{0}{0}-\frac{0}{0}$ -ները ժամանակին չեն մուծվում, դրա հետևանքով դրամ՝ չի լինում գանձարկում, նրանց բավարարելու յեվ այսաեղից առաջ և գալիս անբավականություն նրանց մեջ, ներթ, իրարարացնում, աշխատանքների

խանգարում յեկ այլն։ Մըա համար ել, մեր քոլոր արհմիության անդամները, տեղկոմները, պրոֆմիությունները յեկ բոլոր ծառայողները պետք ե հիշեն և ստիպեն իրենց ձեռնարկություններին, (մանավանդ մասնավոր տեղերում) վորպեսզ զի նրանք ժամանակին մուծեն սոցիալական ապահովագրական գանձարկղի $\frac{0}{0}-\frac{0}{0}$ -ները։ Պետք ե աջակցել գանձարկղի հսկիչներին, վորոնք գալիս յեն ստուգելու թե վոր հիմնարկությունը կամ ձեռնարկությունը ժամանակին չի վճարել սոցապահովագրության $\frac{0}{0}$ -ները յեկ տալ դատի ու յենթարկել սուզանքի անպարտաճանաչ հիմնարկություններին ու ձեռնարկություններին։

ԳԼՈՒԽ Ա-ՐԴ

10. ԻՆՉՊԵՍ ՅԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՉԱՐԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ՅԵՆ ՆՐԱՆՔ։

Սոցիալական ապահովագրության ամբողջ աշխատանքները, ինչպես գիտենք տանում և գավառի մասշտաբով, տվյալ գավառի սոցապահուարկը։ Անչպես ենա կազմվում և ինչպիսի հիմնարկություն ե։

Ամենից առաջ պետք ե ասել, վոր սոցիալական ապահովագրության գանձարկղը գուած մի բանվորական կազմակերպություն ե։ Նրա կոմիտեն 5 կամ 7 հոգուց ընտրվում է արհեստակցական միությունների վարչությունների յեկ բոլոր տեղկոմների համագաղաքային կոնֆերենցիայում։ Այսպիսի գանձարկղներ հայաստանի բոլոր քաղաքներում և ավաններում կազմակերպված յեն։

11. ՈՒԵ Ե ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԴԱՆՉԱՐԿԴՅ
ՅԵՎ ԻՆՉ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ե ՀԱ-
ՇԻՎ ՏԱԼԻՍ ԻՐ ԳՈՐԾՆԵՅՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալական ապահովագրական գան-
ձարկը անմիջական կերպով յենթարկ-
դում և չայսատանի աշխատողկամատի գլխա-
փոր սոցիալական ապահովագրության
վարչության և հաշիվ և տալիս իր գործու-
նեյության մասին նրան ու արհեստակցա-
կան միություններին:

12. ՈՎ Ե ՍՈՑԱՊԳԱՆՉԱՐԿՈՒՄ ՆՐԿ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՄ.

Սոցիալական ապահովագրության գան-
ձարկի կոմիտեների հետ միասին արհես-
տակցական միությունների վարչություն-
ների յեվ տեղկոմների անդամների համա-
րադարձային կոնֆերենցիայում ընտրվում
է սոցապգանձարկիր վերստուգիչ հանձնաւ-
ժողով, փորը յեվ կատարում է գանձարկ-
դում ստուգում և հսկում և նրա գործու-
նեյության վրա, մինչև նոր ընտրությունը:

ԳԼՈՒԽ III-ՐԴ

13. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԳԱՆՉԱՐԿԴՅ ՔԱՆԻ ՏԵՍԱԿ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ
Ե ՅՈՒՅՑ ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԾԱ-
ՌԱՅՅՈՂՆԵՐԻՆ, ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՅԵՎ
ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

Բոլոր բանվորները և ծառայողները,
փորոնք տանում են վարձու աշխատանք,
սոցիալական ապահովագրական գանձ-
արկը նրանց ցույց և տալիս ոգնություն
հետեւյալ գեպքերում:

ՀԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — ՅԵԹԵ ՄԻ ՎՈԽ
բանվոր կամ ծառայող ծառայում ե, բայց
իրենից անկախ պատճառներով տպահո-
վագրված չե, համաձայն աշխատանքի ո-
րենաքրքի Հ 191-ը հոդվածի, նույնպես
ոգավում և ապահովագրվածի բոլոր իրա-
վունքներով:

1) Ցույց և տալիս բժշկական կատար-
յալ ոգնություն ձրի կերպով:

2) Ցույց և տալիս օգնություն ժամա-
նակավոր անաշխատություն մաս-

կանական ապահովագրություն առելով պետք է

հասկանալ՝ ամեն տեսակի հիվանդություն
ստանալը, 2) հանկարծակի վնասվածք ըս-
տանալը, 3) կարստինի դեպքում, 4) հղիու-
թյան ժամանակ, 5) ծննդաբերության ժա-
մանակ, 6) տալիս ե ընտանիքի հիվանդ
անդամին բժշկելու համար արձակուրդ ըս-
տացող բանվորի կամ ծառայողի վարձա-
րությունը:

3) Լրացուցիչ նպաստ և տալիս՝ բանվորի, ծառայողի, կամ նրանց ընտանիքի այս կամ այն անդամի մահվան դեպքում (թաղման ժախս):

4) Ապահովագրում եւ բանվորին կամ
ծառայողին հաշմանդամության դեպքում:
(Յերբ բանվորը ծերանալով զանում եւ
աշխատանքի մշտական անընդունակ կամ
աշխատանքի մեջ մի վորեկիցե տեղը կոտ-
րելով դանում եւ ընդմիջած հաշմանդամ):

5) Ապահովագրում և բանվորին կամ
ձառնայողին գործազրկության դեպքում:

6). Ապահովագրում և մեռնող բանվորի
կամ ծառայողի ընտանիքի անխնառ ան-

դամներին, վորոնք ապրելիս յեն յեղել նրա
խնամքին տակ, մինչև մեռնելը:

14. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՈԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Ինչպես ասացինք, բոլոր ապահովագրված բանվորները և ծառայողները, սոցիալական ապահովագրության գանձարկղի միջոցով, ստանում յեն ձրի բժշկական ոգություն, զանազան դժբախտ պատահարների և հիմանորությունների դեպքում:

Սոցիալական ապահովագրական գանձ-
արկզները բոլոր քաղաքներում ունեն հի-
վանդանոցներ, ամբովատորիաներ, մասնա-
գիտական հիվանդությունների համար ա-
ռանձին բուժավայրեր, հանգստատներ, ու-
նասորիաներ, հանքախին ջրեր և այլն:

15. ՏՆԱՑԻՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՁԵՎ ՀԻՎԱՆ-
ԴԱՆՈՑՆԵՐԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ամեն մի բանվոր կամ ծառայող, կամ նրանց խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամ հիվանդանալուն պես, պեսք և դի-

մի սոցիալական ապահովագրության բժիշկներին: Ամեն մի քաղաքում, սոցիալական ապահովագրության գանձարկղը ունի փարձու բժիշկներ, վորոնք ապրում յեն քաղաքի զանազան մասերում, պետք և նրանց հրավիրել իրենց ընտակարաններից, կամ ներկայանալ քաղաքային ամբուլատորիան և հայտնել հիվանդի տան հասցեն, ցույց տալով ապահովագրական տոմսը: Ցանկացած ժամին ապահովագրական բժիշկը կիրակի հիվանդի տանը և ցույց կտա նրան պահանջված բժշկական ոգնությունը հենց նրա տան մեջ: Յեթե հիվանդը ծանր է, անմիջապես բժիշկը կտա տոմս, վորով նըրան կտեղափոխն հիվանդանոց այնտեղ առողջանալու: Ամեն մի հիվանդության դեպքում դիմել ապահովագրական բժիշկներին և պահանջել, վոր նրոնք շտապ կել: ով պահանջված բժշկական ոգնությունը ցույց տան, առանց մի վորկից վարձատրության:

16. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ամեն մի ապահովագրված բանվոր կամ ծառայող վորը ստանում է մի վորյելից հիվանդություն, պետք և դիմի քաղաքային ամբուլատորիային: Քաղաքային ամբուլատորիան ունի զանազան տեսակի հիվանդությունների համար առանձին բաժիններ, ինչպես որինակ, վեճերական ախտերի, աչքի ատամի և այլն:

Ամբուլատորիաները բաց յեն առավույան ժամի « 9 »-ից մինչև « 2 »-ը, իսկ յերեկոյան ժամի « 4 »-ից մինչև « 7 »-ը:

Ամեն տեսակի բժշկական ոգնություն ամբուլատորիան ցույց է տալիս ձրի, դիմեցեք ամեն մի կարիքի դեպքում և պահանջեցեք:

17. ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հայաստանի սոցիալական ապահովագրության հանրապետական վարչու-

թյունը ունի հանգստյան աներ, ամեն մի բանվոր կամ ծառայող հանգստյան տուն գնալու համար պետք է զիմում տա իր տեղկոմին: Տեղկոմը կազմում և զիմում տվողներից ցուցակը և ներկայացնում է իր միության վարչության: Վերջինս ստանալով բոլոր տեղկոմներից ցուցակները, միացնում և և ուղարկում սոցազգանձարկդին: Սոցիալական ապահովագրության գանձարկդին կից աշխատում և մշտական բըժըշկական մի հանձնաժողով, վորը ստանալով ցուցակ, կանչում և նրանց քննության և վորոշում և թե մւմ իսկապես պետք և ուղարկել հանգստյան տուն և ումը վոչ: Հանգստյան տուն գնացողը իր աշխատավարձը ստանում է իր հիմնարկությունից և վոչ թե գանձարկդից:

18. ՍԱՆԱՏՈՒԹԻԱՆԵՐԻՑ ՅԵՎ ՀԱՆՔԱՑԻՆ ԶԲԵՐԻՑ ՈԳՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սոցիալական ապահովագրական գանձարկդին միջոցով ստանադրիաներից և հանքային ջրերից ոգտվելու կարգը նույն

և, ինչ վոր հանգստյան աներինը: Այսինքն՝ ոգտվելու կարիք յեղած դեպքում, տեղկոմները և արհմիությունները պետք են կատարեն այն, ինչ վոր հանգստյան աներից ոգտվելու համար:

19. ԺԱՄԱՆԱԿԱՎԱՐ ԱՆԱՇԽԱՏՈՒԿԱԿ- ՆԵՐԻՆ ԻՆՉ ՈԳՏԵԼՈՒԹՅՈՒՆ Ե ՑՈՒՑՑ ՏԱ- ԼԻՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՉԱՐԿԴՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ

Ինչպես մենք ցույց ենք տվել սույն «ուղեցույցի» 3-րդ դիմի 2-րդ կետում, ժամանակավոր անաշխատունակության մի քանի դեպքեր կան, վորոնց վերա մենք կանգ կառնենք ստանձին- առանձին:

ա. Հիվանդության գեպքում

Այն բանվորը կամ ծառայողը, վորը ծառայության մեջ կամ գործի ժամանակ հիվանդանում և, ինչպես մենք ասել ենք սույն «ուղեցույցի» 3-րդ դիմի 14-րդ կետում, ստանում և բժշկական ձրի ողնու-

թյուն սոցապգանձարկղից: Այստեղ պետք է ասել, վոր միենույն ժամանակ նա սոցիալական ապահովագրական գանձարկղից ստանում և բժշկության ժամանակամիջոցի աշխատավարձը լրիվ չափով: Հիվանդ բանվորը կամ ծառայողը սոցապգանձարկղից իր հիվանդության ժամանակի աշխատավարձը (սոճիկը) ստանալու համար պետք է բժշկության վայրից կամ սոցիալական ապահովագրության գանձարկղից բժշկներից ստանա բժշկության թերթիկ, վորի մեջ գրված և թե նա վոր ժամանակից մինչեւ վոր ժամանակն և հիվանդ յեղել և դործի չի գնացել և այդ թերթիկը ծառայողը կամ բանվորը ներկայացնելով սոցապգանձարկղը, այնտեղից կստանա իր աշխատավարձը: Յեթե մինչեւ 3 որ և հիվանդանում, նա չի ստանում աշխատավարձ, իսկ 3 որից ավելի յեթե հիվանդությունը տևեց, նա կստանա վերոհիշյալ կարգով:

Բ. Գնասվածք ստանալու դեպքում

Բանվորը կամ ծառայողը աշխատանքի մեջ հանկարծ վնասվածք ստացավ, այսինքն յենթազրենք թե գործը կատարելիս, կամ փողոցով անցնելիս, նրան մի դժբխտ դեպք պատահեց և ձեռքը կամ ոչքը վնասվեց: Նա պետք է անմիջապես դիմի սոցապգանձարկղի բուժավայրերը, ամբուլատորիան, կամ սոցապգբժիշկներին և կստանա ձրի բժշկական ոգնություն, ինչպես ասել ենք 3-րդ գլխի 14-րդ կետում: Նա միենույն կարգով ինչվոր հիվանդության դեպքումներ, պետք և ստանա իր աշխատավարձը սոցապգանձարկղից այն որերի համար, վոր նա դործի չի գնացել, այլ գնացել, և բժշկության, իսկ յեթե նրա վնասվածքը չլավանա, կամ անհնարին լինի նրան բժշկել այդ բանվորը կամ ծառայողը մնում և սոցապգանձարկղի հաշվին ապահովագրված վորպես հաւեմանգամ (յւեռհուն) և մինչեւ մահը ստանում և նըպաստ սոցիալական ապահովագրական

գանձարկղից իր աշխատավարձի լրիվ չու-
փով, (վորքան վոր նա ստացել և աշխա-
տավարձ մինչև վնասվութք ստանալը):

Գ. Կարանինի (առանձնացման տուն)
գեպիում (վարակվելու գեպիում)

Յեթե այս կամ այն բանվորի կա ծա-
ռայողի ընտանիքում, նրանց անդամներից
մեկն ու մեկը, կամ հենց ինքը ծառայողը
կամ բանվորը հանկարծ ստանում և մի
վորեիցն հիվանդություն վարակումն, (որի-
նակ՝ քոս, քաջալ և այլ նման կաշվի հի-
վանդություններ) այդ բանվորին կամ ծա-
ռայողին չեն թույլ տա գնա աշխատանքի,
վորովհետի նա կարող և վարակել ուրիշ
ծառայողների կամ բանվորների: Ահա այդ
ժամանակ նրան ստանձնում և սոցա-
գանձարկղը և բժշկում: Այդ ամբողջ բժշ-
կության ժամանակ, բանվորը կամ ծառա-
յողը իր ոսճիկը ստանում և սոցագան-
ձարկղից:

Դ. Հղիության գեպիում

Հղիության գեպիում, բանվորունուն,
կին ծառայողին կամ բանվորի ու ծառայ-
ողի կնոջը, սոցիալական, ապահովագրական
գանձարկղը ցույց և տալիս հետևյալ ոգնու-
թյունը:

1) Հղիացած բանվորունին ստանումն
արձակուրդ ծննդբերությունից 8 շաբաթ
առաջ և 8 շաբաթ հետո, ընդամենը 2 ա-
միս նա իր յերկու ամսվա վարձը ստա-
նում և սոցագանձարկղից:

2) Հղիացած բանվորունին ստանուը
և արձակուրդ ծննդբանդությունից վեց շա-
բաթ առաջ և վեց շաբաթ հետո, ընդամենը
1½ ամիս: Նա նույնպես յուր արձակուրդի
մեջ յեղած ժամանակվա աշխատավարձը,
ստանում և սոցագանձարկղից:

3) Բանվորի կամ ծառայողի կնոջ հը-
ղիության գեպիում յեթե նա չի ծառայում
ստանում և ձրի բժշկական ոգնությունն հի-
վանդանոցի միջոցով, պահանջված դեղու-
րայքը ձրի կերպով, ծնված յերեխային

միանվագ նպաստ՝ 13 ր. 50 կ. և 9 ամիս
շաբունակ յերեխային խնամելու համար
3 ր. 50 կ. ընդամենը 31 ռ. 50 կ.

4) Հղիացած բանվորուհին կամ կիս
ծառայողը իրենց արձակուրդը ստանալու
համար պետք է գիմն սոցազգանձարկղի
ամբուլատորիան ու բժշկական կոմիսիայի
յենթարկվելով ստանան համապատասխան
վկայական, վորը ներկայացնելով հիմնար-
կությանը, ստանում յեն արձակուրդի:
Սոցազգանձարկղից արձակուրդի ժամանա-
կամիջոցի ոռճիկը ստանալու համար պետք
է դիմել սոցազգանձարկղ, ներկայացնելով
հղիության առթիվ ստացած արձակուրդի
վկայականը:

ՅԵ. ՖԵՆԳԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԵՎԻՇՈՎՄ

Բանվորուհին կամ կիս ծառայողը ծն-
նդաբերության ժամանակ, ամենից առաջ
կարող յեն ոգտվել սոցազգանձարկղի հի-
վանդանոցներից:

Հիվանդանոցից ձրի ոգտվելու համար

պետք է հիվանդանոց գնալիս ներկայացնել
միայն աղահովագրական առմաղ հիվանդանո-
ցի վարիչին և նա կնդունի հիվանդանոց ձրի:
Նորածին յերեխային հագուստ և այլ ան-
հրաժեշտ իրեր գնելու համար իրեն միան-
նվագ նպաստ սոցազգանձարկղը տալիս և
13 ռ. 50 կ. և 9 ամիս շաբունակ նրան
խնամելու համար ամիսը՝ 3 ռ. 50 կ. ըն-
դամենը 31 ռ. 50 կ.:

Այս նպաստները ստանալու համար
պետք է ներկայացնել «Զագսի» վկայականը,
յերեխայի ծնեդյան մասին, սոցազգանձար-
կղին:

Սոցիալական ապահովագրական դան-
ձարկղը տալիս է բանվորին կամ ծառայողի
ընդանիքի հիվանդ անդամին խնամելու և
բժշկելու համար ստացած արձակուրդի ժա-
մանակվա աշխատավարձը, վորը ստանալու
համար, բանվորը կամ ծառայողը պետք է
ներկայացնի սոցազգանձարկղին այդ առ-
թիվ ստացած արձակուրդի վկայականը:

Զ. Կրացուցիչ նպաստ

Սոցիալական ապահովագրական գանձարկղը փորձես լրացուցիչ նպաստ տալիս և բանվորի, ծառայողի կամ նրանց խնամքի տակ գանվող այս կամ այն անդամի մահվան դեպքում՝ նրա թաղման ծախսերը՝ 13 ր, փոքր ստանալու համար պետք է ներկայացնել «Զագա»-ի վկայականը մահցածի մասին։

20. ՍՈՅԻԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԳԱՆՉԱԿԴԲ ԽՆՉ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ Ե ՑՈՒՑՑ
ՏԱԼԻՄ ԲԱՆՎՈՐԻՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂԻՆ,
ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Սոցիալական ապահովագրական գանձարկղը՝ ամեն մի բանվորի կամ ծառայողի գործազրկության դեպքում, նրան ապահովագրում և և նպաստ է տալիս։

21. Ո՞Վ ԿԱՐՈՂ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼ ՍՈՅԻԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՉԱԿԴԲԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ։

Համաձայն գոյություն ունեցող որենք-

ների, սոցիալական ապահովագրական դանձարկղը պարտավոր է ապահովագրել և ապահովագրում և վոչ մի միջոց չունեցող, առևտրով, սեփական տնտեսությամբ և այլ կողմնակի աշխատանքներով չպարագող այն անձանց, փորոնք պատկանում են հետեւյալ կատեգորիաներին և ցուցակագրված են աշխաժողկումատի միջնորդրյուրոներում (Աշխարհուսաներում)։

ա) Վորակյալ բանվորները և մասնագիտական ուսում ստացած բարձր վորակի մրուավոր աշխատանքի անձինք (ինչպես որինակ, ճարտարապետները, բժիշկները, մանկավաճները, հողաչափերը և այլն։ Սրանցից ծառայության ստաժ չի պահանջվում։

բ) Վոչ վորակյալ բանվորները, վորոնք արհմիության անդամ են և մինչև գործից զրկվելը, (գործազրուրկ դառնալը) անընդհատ վարձու աշխատանք են կատարել վոչ պակաս մեկ տարութ։

շ) Վոչ վորակյալ բանվորները, վո-

բոնք արհմիության անդամ չեն, և միշտ
դործագուրկ դառնալը, անընհպատ վարձու
աշխատանք են կատարել զոչ պակաս 5
տարուց:

յե) Մինչև 16 տարեկան փոքրահա-
սակները, յեթե նրանք աշխատանքի յեն
մտել աշխատեչի թույլտվությամբ:

Զ) Մինչև 18 տարեկան անշափահաս-
ները, փորոնք կատարել յեն վարձու աշխա-
տանք (անկախ ստաժից):

Ե) Կարմիր բանակայինները, նավա-
տորմղից արձակվածները և անվորոշ ժա-
մանակով արձակուրդի թողնվածները, փո-
րոնք զինվորական ծտայության են կանչ
ված յեղել անմիջապես վարձու աշխատան-
քից (անկախ աշխատանքի ստաժից):

ը) Աշխատանքի ստաժը (աւոգությու-
նը) անընդհատ և համարվում, յերբ ընդ-
հատումը (ընդմիջումը) առաջ և յեկել գոր-
ծազրկության պատճառով, վորովեսպին
պետք և հասաւալի աշխատովկոմատի միջ-
նորդ բյուրոների (աշխաբորսաների) կող-

մից, կամ ժամանակավոր անաշխատունա-
կության պատճառով, վորը նույնպես հաս-
տառիած պետք և լինի համապատասխան
փաստաթղթերով:

22. ՎՐՅՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿ Ե ՏՐՎԱԴՐՄ
ՆՊԱՍՏԸ

Առեն մի գործազուրկ ապահովագրվե-
լու և նպաստ ստանալու իրավունք ունի
մեկ տարվա ընթացքում միմայն վեց տ-
միու, որինակ՝ յեթե մեկը գործազուրկ և
յեղել 1924 թ. հունվարի 1-ից, ամբողջ
տարվա ընթացքում նա ստացել և վեց ամս
վա նպաստ հունվար ամսից նինչե հունվար
ամսից 1924 թվին գործազուրկը կայ-
րող և ըրդ անգամ ապահովագրվել 1925 թ.
հունվար ամսից, առենք վեց ամսից հետո
և 6 ամսով, և այսպես շարունակ, մինչ
դուծի տնօցնելը:

28 ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԸ

Ապահովագրված գործազուրկները ստա-
նում են իրենց կամ իրենց ընտանիքի այս

կամ այն անդամի ժահվան գեղքում թաղման նպաստը այնուես և այնչափով, ինչպես աշխատանքի մեջ յեղած ապահովագրված ները:

24. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԿԱՎՈՐ ԱՆԱՇԽՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՈԳՏՎՈՒՄ ԵՆ

Բոլոր այն գործազուրկները, վորոնք ապահովագրված են, յեթե նրանց ապահովագրված յեղած ժամանակամիջոցում հրաժանգանան, վասավածք ստանան և այլ օգատնաւորվ աշխատանքի մտնելու անբնդունակ լինեն, շարունակում են ստանալ գործազրկության նպասար, անկախ նրա ժամանակ լրանալուց, մինչեւ վոր կամ բուլորովին անառողջանան և լնդունակ լինեն գործի գնալու կամ նրանց հաշմությունը հաստատվի ենրանք ապահովագրվեն սոցագունդարկողի կողմից, վորպես հաշմանդամ՝ ները:

25. ՁԵՐԵՆԱՅԻՆ, ԽՆԱՄՎՈՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՊԱՍՏԸ

Բոլոր ապահովագրված գործազուրկները և նրանց կանայք ստանում են նորութիւն յերեխային խնամելու և կերակրելու նըպաստը, ծառայության մեջ յեղած ապահովագրվածներին հավասար, համաձայն աշխորենսգրքի № 188-րդ հոդվածի: Նորածին յերեխաների և ծննդաբերության առթիվ նպաստ ստանալու, համաձայն գոյություն ունեցող կանոնադրության սահմանված իրավունքներից ոգտվում են նաև գործազրկ կանայք, անկախ նրանց ապահովագրության ժամանակը լրանալուց:

26) ԻՆՉՊԵ՞Ս ՑԵՎ Ո՞ԻՄ ՄԻՋՈՑՈՎ ՊԵՏՔ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵՆ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԸ

Գործազրկների ապահովագրումը կատարվում է սոցապահնձարկղին կից կաղմված հանձնաժողովի կողմից, վորին տնդամակցում և արոֆմիությունների,

լանձարկղի կոմիտեյի և աշխատողկոմատի
ներկայացուցիչները (աշխատեսուչը կամ
միջնորդ բյուրոյի վարիչը):

Ամեն մի քանիդր կամ ծառայող, վո-
րը գործազուրկ և գառնում և յեթե նա
պատկանում և սույն ուղեցույցի 4-րդ
կետում հիշված կատեգորիաներին, կարող
և անմիջապես դիմում տալ սոցազգանձարկ-
դին ապահովագրվելու համար: Դիմումի հետ
պետք և ներկայացնել հետեւյալ փաստա-
թղթերը՝ 1) արհմիության անդամատումը,
2) ծառայության ստաժի վկայականը, 3)
վկայական նրա ընտանեկան դրության
մասին, քանի անձ են, ևայլն. 4) անձնա-
կան վկայական, 5) փաստաթուղթ, վոր նա
վոչ մի պետականություն կամ այլ յեկա-
մուտի աղբյուրներ չունի:

27) ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԸ
ՆՊԱՍՏԻՑ ԻԱԶՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ԶՐԿՎԵԼ

Ապահովագրված գործազուրկները
դրվում են նպաստ ստանալու իրավուն-
քից, հետեւյալ դեպքերում՝

1) Յերբ գործազուրկը առանց հար-
դելի պատճառի չի ներկայացել միջնորդ
բյուրոյին հայտի մի քանի անգամ (ԱՅԵՅ):

2) Յերբ գործազուրկը առանց հարգե-
լի պատճառի հրաժարվել և գնալ աշխար-
ույցի ուղարկած աշխատանքի:

3) Յերբ պարզվում և հհագայում,
վոր գործազուրկը բավական չափով յեկա-
մուտներ ունի:

28) ԱՄՍԻ ՔԱՆԻՄԻՆ և ՏՐՎԱԽՄ ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՆՊԱՍՏԸ

Ապահովագրված գործազուրկներին
նպաստը՝ տրվում է ամեն ամսի 25-ից մին-
չե մյուս ամսի 5-ը: 25-ից շուտ չի տրվում
իսկ ուշացողները այդ ամսվա ստանալիքից
դրկվում են:

29) ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ, ԱՆԿԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ
ՀԱՃՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Բոլոր ապահովագրված բանվորները
և ծառայողները անկարության կամ հաշ-

մանդամության դեպքում ապահովագրվում
են սոցիալական ապահովագրական գան-
ձարկղի կողմից, Հաշմանդամ դառնալու
(մշտական գործի անընդունակ) յերկու
դեպք կա, վորոնց վրա մենք կանգ կառ-
նենք առանձին-առանձին:

Ա. Վեասվածք օօանութեանվանեավ համօանգամություն

Բանվորը կամ ծառայողը, վորը աշ-
խատում ե մի վորկից կործարանում կամ
հիմնարկում, կամ փողոցով անցնելիս, հան-
կարծ նրան մի դժբախտ դեպք պատահեց,
ձեռքը կամ վոտքը կոտրվեց, կամ թե չե-
աչքը դուրս յեկավ, ի՞նչ ե լինելու նրա
դրությունը:

Ինչպես մենք ասել ենք առաջ, այդ
բանվորը անմիջապես պիտի դիմի սոցապ-
գանձարկղի բժշկական ոգնությանը, վորը
նրան բժշկելու ե: Բայց յենթադրենք, վոր
ֆիսավածքը այնքան ծանր է, վոր նա չի
բժշկվում և վոչ մի դեպքում նա այլ ես

չի կարող աշխատանք կատարել իր կյան-
քի մեջ, ի՞նչ պետք ե անել այս դեպքում,
նա դառնում ե մշտական անաշխատունակ-
աշխատանքի անկար կամ ինվալիդ և սո-
ցիալական ապահովագրական գանձարկղը
նրան ապահովագրում ե մինչև մահ: Նման
դեպքերում, բոլոր ապահովագրված բան-
վորները և ծառայողները անմիջապես պետք
ե գիմեն սոցիալական ապահովագրական
գանձարկղին: Նա սոցապգանձարկղից կըս-
տանա նպաստ, իր լրիվ աշխատավարձի
չափով մինչև յուր մահը:

Բ. ԾԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԲԵ- ՑՈՒՆԱԿ ԴԱՌՆԱԼԸ ԾԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵ- ՎԱՆՔՈՎ)

Բանվորը կամ ծառայողը, իր վորոշ
տարիքում, (մինչև 55-60 տարեկան) ինչ-
պես զիտենք դառնում ե աշխատանքի ան-
ընդունակ, նա այլև չի կարող աշխատել
իր ձերության հետևանքով պոաջ յեկած

թույլության պատճառով։ Նա դառնում է աշխատանքի անկար (ինվալիդ)։

Այդպիսի աշխատանքի հաշմանդամներին, սոցիալական ապահովագրական գունձարկղը ապահովագրում է, այսինքն, վերցնում է իր վրա նրանց կյանքի ծանր որերին խնամելու և պահելու հոգու, առաջ նրան ամսական նպաստը։

Ապահովագրելու համար բանվորը կամ ծառայողը պետք է ունենա վոչ պակաս 8 տարվա աշխատանքի ստաժ, (ծառայության ստաժ) այսինքն ծերության հասակում կարող է ապահովագրվել այն բանվորը կամ ծառայողը, վորը իր ամբողջ կյանքում մինչև 8 տարի վարձու աշխատանք է կտարիել (ծառայել է) զանազան հիմնարկներում ծեռնարկություններում։

Հաշմանդամության վերաբերյալ յերկու դեպքերի ապահովագրության համար պետք է դիմում տալ սոցապգանձարկղին, վորին կից կազմված և մի հանձնաժողով արհմիության ներկայացուչի մաս-

նակցությամբ, նման դիմումները քննելու համար։ Պետք է ներկայացնել դիմումի հետ հետևյալ փաստաթղթերը՝

- 1) արհմիության մնդամատոմս,
- 2) 8 տարվա վարձու աշխատանքի վըկայական,
- 3) փաստաթղթուղթ, վոր նա վոչ մի սեփականություն կամ կողմնակի յեկամուսչունի.

4) անձնական վկայական, վորի մեջ պետք է լինի նրա խնամքին ապրող ընտանիքի անդամների ճիշտ թիվը։

30. ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆԶԱՄԿԴԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՄ Ե ՄԵՌՆՈՂ ԲԱՆԳՈՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ,

Եյս կամ այն բանվորը կամ ծառայողը, վորը մահանում է բնական կամ հանկարծակի մահով, նրա խնամքի տակ գրանվոր ընտանիքի աշխատանքի տնընդունակ անդամները ապահովագրում են սոցապգանձարկղի կողմից։ Ապահովագրումը կատա-

ըում ե սոցազգարձարկղը, վորին և պետք
ե դիմում տալ նման դեպքերում։ Նպաստը
արվում ե մինչև ընտանիքի անդամների
գործի անցնելը և պշտամանքի ընդունակ
դառնալը։

IV-ՐԴ ԳԼՈՒԽ

ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈ-
ՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Համահայաստանյան մասշտաբով բոլոր
տեղական սոցազգանձարկղների և կայան-
ների (պունկտերի) աշխատանքները ղեկա-
վարելու և ընդհանրապես բանվորների և
ծառայողների սոցիալական ապահովագրա-
կան գործը Հայաստանի մասշտաբով տա-
նելու համար, Հայաստանի աշխատանքի
ժողովրդական կոմիսարիատին կից աշխա-
տում ե Հայաստանի սոցալական ապա-
հովագրական կենտրոնական վարչությանը,
վորին պետք ե դիմեն բոլոր բանվորները,
ծառայողները, տեղկոմիները, արհմիորթյուն-
ները, և զանազան հիմնարկ—ձեռնարկու-

թյուններ, այս ուղեցույցի մեջ հիշված կե-
տերի կամ տեղական սոցազգանձարկղների
կողմից կատարված այս կամ այն քայլի
մասին բացատրություններ ու պարզում-
ներ ստանալու համար։



ՀՀ Ազգային գրադարան



NL0212746

44.138